ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 34 -Ա « 26 » 01 2026թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

26.01.2026

X

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 **ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2026 թվականի հունվարի 26-ի № 34-Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) անձնակազմի կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին)՝ աշխատանքային ծավալի կտրուկ ավելացմամբ պայմանավորված՝ Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող գործառույթների (մասնավորապես՝ Կոմիտեի նախագահի, գլխավոր քարտուղարի կողմից նշանակվող անձանց (այդ թվում՝ Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների), քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերում առկա փաստաթղթերի ամբողջականության ստուգում և անձնական գործի ձևավորում, անձնական գործերի հանձման-ընդունման, պահպանման աշխատանքների իրականացում, մասնակցություն էլեկտրոնային հարթակի վարման աշխատանքներին, աշխատողների աշխատանքային ստաժի հաշվարկում, ժամկետային աշխատանքային պայմանագրերի կնքման հետ կապված աշխատանքների իրականացում, Կոմիտեի նախագահի, գլխավոր քարտուղարի՝ անձնակազմի կառավարման գծով հրամանների նախագծերի նախապատրաստում և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ,

2) «ՀՀ Սահմանադրություն, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն, 2011 թվականի հոկտեմբերի

20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն, 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն, 2018 թվականի հուլիսի 10-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 792-Ն, 2018 թվականի նոյեմբերի 15-ի «Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը և պայմանները սահմանելու մասին» N 1287-Ն, 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Փորձնակ գրանցելու և աշխատանքներին մասնակցության առանձնահատկությունները սահմանելու մասին» N 439-Ն, 2005 թվականի հունվարի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 224-Ն ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 30-Լ հրամանի անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,
4) գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություն,
5) ներկայացուցչական և կազմակերպչական հմտություններ,
6) հայերենի գերազանց իմացություն,
7) օտար լեզվի իմացություն,
8) փաստաթղթերի նախապատրաստմանհմտություն,
9) արագ կողմնորոշվելու ունակություն,
10) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. Կոմիտեի նախագահի, գլխավոր քարտուղարի՝ անձնակազմի կառավարման գծով հրամանների նախագծերի նախապատրաստում, հրամաններ ստորագրվելուց հետո աշխատողներին տեղեկացում, համապատասխան պաշտոնի նշանակվող՝ Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև

քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերի վարում (այդ թվում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում), հաշվառում, հանձնում-ընդունում, պահպանում, աշխատողների աշխատանքային ստաժի հաշվարկման աշխատանքների իրականացում,

բ. Կոմիտեի քաղաքացիական ծառայողների նկատմամբ անցկացվող ծառայողական քննություն վարողին (վարողներին) պահանջվող փաստաթղթերի տրամադրում,

գ. Կոմիտեի աշխատողների աշխատանքային կարգապահության վերահսկողության իրականացում,

դ. պատկան մարմինների կողմից նախկին և ներկայիս աշխատակիցների վերաբերյալ պահանջվող տեղեկատվության տրամադրում,

ե. Կոմիտեի անձնակազմի կառավարման ոլորտին վերաբերող բողոքների, դիմումների, առաջարկությունների ուսումնասիրություն, վերլուծություն դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

զ. Կոմիտեի աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարման աշխատանքների իրականացում,

է. Կոմիտեի աշխատողների գործուղումների ձևակերպում, ինչպես նաև Կոմիտեի աշխատողներին գործուղման վկայականների տրամադրում,

ը. Բաժնի գործառույթներին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում,

թ. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա.»-«թ.» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. Կոմիտեի նախագահի, գլխավոր քարտուղարի՝ անձնակազմի կառավարման գծով հրամանների նախագծերի նախապատրաստում, հրամաններ ստորագրվելուց հետո աշխատողներին տեղեկացում, համապատասխան պաշտոնի նշանակվող՝ Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերի վարում (այդ թվում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում), հաշվառում, հանձնում-ընդունում, պահպանում, աշխատողների աշխատանքային ստաժի հաշվարկման աշխատանքներն իրականացվել է,

բ. Կոմիտեի քաղաքացիական ծառայողների նկատմամբ անցկացվող ծառայողական քննություն վարողին (վարողներին) պահանջվող փաստաթղթերը տրամադրվել է,

գ. Կոմիտեի աշխատողների աշխատանքային կարգապահության վերահսկողությունն իրականացվել է,

դ. պատկան մարմինների կողմից նախկին և ներկայիս աշխատակիցների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը տրամադրվել է,

ե. Կոմիտեի անձնակազմի կառավարման ոլորտին վերաբերող բողոքները, դիմումները, առաջարկություններն ուսումնասիրվել է, դրանց վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել է,

զ. Կոմիտեի աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարման աշխատանքներն իրականացվել է,

է. Կոմիտեի աշխատողների գործուղումները ձևակերպվել է և Կոմիտեի աշխատողներին տրամադրել են գործուղման վկայականները,

ը. Բաժնի գործառույթներին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկները ներկայացվել է,

թ. իրականացվել է Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ: